11602

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Համբարձում Մաթևոսյան

«16» 10 2025թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ N 241 - 25

Նախաձեռնող՝ ***«ԱՐՄԵՆԻԱ » ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆՆԵՐ» ՓԲԸ***
ք. Երևան 0042, «Զվարթնոց» օդանավակայան

Գործունեություն՝ ***«Զվարթնոց» օդանավակայանի ավտոհանգրվանի վերնահարկի վերակառուցում***
ք.Երևան, Մալաթիա-Սեբաստիա , Ի.Գասպարյան փ.34

Առդիր՝ 3 թերթ:

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 241 - 25

«16» հոկտեմբերի 2025թ.

«Զվարթնոց» օդանավակայանի ավտոհանգրվանի վերնահարկի վերակառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	«ԱՐՄԵՆԻԱ » ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆՆԵՐ» ՓԲԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն/նախագիծ
Գործունեության տեսակը՝	«Բ» կատեգորիա
Գտնվելու վայրը՝	ք.Երևան, Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջան, Իսահակ Գասպարյան փողոց հ. 34

Ներածական մաս. «ԱՐՄԵՆԻԱ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆՆԵՐ» ՓԲ ընկերությունը նախատեսում է իրականացնել «ԶՎԱՐԹՆՈՑ» օդանավակայանի ավտոհանգրվանի վերնահարկի վերակառուցում: Նախատեսվող գործունեությունը ենթակա է փորձաքննության՝ համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի ՀՕ-150-Ն (այսուհետ՝ Օրենք) 12-րդ հոդվածի 9-րդ մասի: Ավտոհանգրվանի վերակառուցման նախագիծը նախատեսվում է իրականացնել Երևան քաղաքի, Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի, Իսահակ Գասպարյան փողոց հ. 34 հասցեում: Նախագծման համար հիմք են հանդիսացել պատվիրատուի կողմից ներկայացված տեխնիկական պահանջները, գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերը և N 01/18-07/2-61988-708 նախագծման թուլտվությունը՝ տրված 05.10.2023թ.-ին:

Նկարագրական մաս. Զվարթնոց միջազգային օդանավակայանը գտնվում է Երևանից 10 կմ դեպի հարավ-արևմուտք՝ Փարաքար գյուղի մոտակայքում: Հայցվող տարածքը կառուցապատված է, մասնավորապես՝ օդանավակայանային համալիր՝ 35812.88 քմ, ավտոկայանատեղի՝ 21518.2 քմ, ծառայողական շենք՝ 31.1 քմ: Երկրաբանական տեսակետից տարածքը բարենպաստ է կառուցապատման համար:

Վերակառուցվող ավտոհանգրվանը գտնվում է Երևան քաղաքի, Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանում: Նախատեսվում է ավտոհանգրվանի հարթ տանիքի վերակառուցում: Շուրջ 300 մեքենայի համար նախատեսված բացօթյա ավտոկայանատեղիի կառուցում 10560 քմ մակերեսով: Գոյություն ունեցող կառույցի տանիքն ի սկզբանե նախատեսված է եղել հետագա վերակառուցմանը՝ ավտոհանգրվանի պահանջներից ելնելով: Նախատեսվում է

հարթ տանիքի, արհեստական խոտածածկի, գոյություն ունեցող շերտերի հեռացում, հավաքովի ե/բ ծածկի պանելների ապամոնտաժում (թեքահարթակների հատվածում ըստ գծագրերի), հավաքովի մետաղական կոնստրուկցիաներով և ե/բ ծածկով թեքահարթակների կառուցում, թեքահարթակների հավաքովի մետաղական ծածկոցի կառուցում, հատակի շերտերի իրականացում, ջրահեռացման կազմակերպում: Նախատեսվում է նաև +3.45 նիշով՝ 2-րդ հարկից ելքային ուղղու կառուցում, որի համար նախատեսվում է իրականացնել բացվածք գոյություն ունեցող հենապատից: Նախատեսվում է նոր լուսատուների, մետաղական բազրիքի տեղադրում, կղզիատիպ հատվածներում արհեստական խոտածածկի վերատեղադրում, ավտոանվահրիչների (Wheel stopper), հետիոտնի անցման արգելապյուների տեղադրում համապատասխան գծանշումներով: Ապահովված են լինելու հակահրդեհային անվտանգության նորմատիվ պահանջները:

Ավտոկայանատեղիի տեխնիկատնտեսական ցուցանշներն են՝

կառուցապատման մակերես՝ 10560քմ

բարեկարգման մակերես՝ 570 քմ:

Բացօթյա ավտոկայանատեղիի 3-րդ հարկի անձրևաջրերի ջրահեռացումն իրականացվելու է հոսակների (գոյություն ունեցող) և ավտոկայանատեղիների համար նախատեսված ջրհավաք առվակների միջոցով, որոնք խմբավորվում և միացվում են գոյություն ունեցող 12 հատ Մ110 մմ տրամագծով և 2 հատ Մ225 մմ տրամագծով ջրահեռացման կանգնակներին, ըստ պատվիրատուի կողմից տրված տեխնիկական առաջադրանքի: Անձրևատար խողովակները մոնտաժվելու են ավտոկայանատեղիի 2-րդ հարկի առաստաղի տակով: Նախատեսվում են Մ160-110 մմ պոլիէթիլենային (pe) ջրահեռացման համար նախատեսված սեղմիչ ռետինե օղակներով լայնուկավոր խողովակներ: Քանի որ ջրահեռացման կանգնակները գտնվում են ավտոկայանատեղիի մեքենաների կայանման վայրերում, չունենալով հնարավորություն խողովակները վեր բարձրացնելու, այդ իսկ պատճառով, ներկայիս գոյություն ունեցող հոսակները, որոնք տեղադրված են կանգնակների վրա, պետք է վերատեղադրվեն և ծառայեն կանգնակների օդափոխության համար: Մոնտաժումից հետո համակարգը կենթարկվի հիդրավլիկական փորձարկման:

Ավտոհանգրվանի համալիրի թեքահարթակների կառուցման համար կատարվելու է հողային աշխատանքներ: Ե/բ հիմքերի տեղադրման համար կատարվելու է մոտ 1750 խմ ընդհանուր ծավալով հողային զանգվածի հանույթ և 650 խմ հետլիցք: Ավելցուկային 1100 խմ հողային զանգվածը կտեղափոխվի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր: Շինարարական աղբը,որի մեծ մասը կազմելու է 3-րդ հարկի տանիքի քանդումից առաջացած շինարարական թափոնները, ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր: Բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ տարածքների ջրցանի, հողի/գրունտի խոնավացման համար և շինանձնակազմի խմելու կենցաղային նպատակների համար: Տարածքն արդեն իսկ ենթարկված է ազդեցության, ուստի բուսական և կենդանական աշխարհի ներկայացուցիչներ ինչպես նաև պատմամշակութային հուշարձանները բացակայում են: Ներկայացվող աշխատանքների կատարման ընթացքում հիմնական ռիսկերը կապված են մթնոլորտ

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒ ԿԵՆՏՐՈՆ
ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒ ԿԵՆՏՐՈՆ
ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿ
ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿ
02513163
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ
ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION
OF EXPERTS

արտանետումների հետ, որոնք հիմնականում փոշու և դիզելային վառելիքի արգասիքներն են: Շինարարական աշխատանքների ընթացքում կիրականացվեն մշտադիտարկումներ՝ ուղղված շինհրապարակի որակի, բանվորական հագուստի կուլտուրայի, անվտանգության կանոնների պահպանմանն: Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է մասնահանել ամբողջ շինարարության ընթացքում 700 հազ. ՀՀ դրամ:

Պատճառաբանական մաս. Փորձաքննական գործընթացին մասնակցել են տարածքային կառավարման և ենթակառուցվածքների, առողջապահության, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, քաղաքաշինության և կադաստրի կոմիտեները, Երևանի քաղաքապետարանը և շրջակա միջավայրի նախարարության համապատասխան ստորաբաժանումները:

Նախատեսվող գործունեության ՇՄԱԳ հաշվետվության փորձաքննությունն իրականացվել է Օրենքի պահանջներին համապատասխան: «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՕ-150-Ն օրենքի և Կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի N 2343-Ն որոշման հավելվածի՝ 2025թ. սեպտեմբերի 17-ին Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ղեկավարի նստավայրում կայացել է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ երկրորդ հանրային լսումը, որի ընթացքում նախագիծը հավանության է արժանացել:

Պարտադիր կատարման ենթակա պահանջներ

1. Կառուցապատման աշխատանքների ընթացքում պահպանել «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի 11-րդ հոդվածով սահմանված պահանջները՝ շրջակա տարածքները զերծ պահել շինարարական աղբից, փոշին նվազագույնի հասցնելու նպատակով շինարարության ընթացքում ցանկապատել շինարարական հրապարակները, շինությունները ծածկել շինարարությանը համապատասխան բարձրությամբ անթափանց թաղանթով:
2. Վերակառուցման աշխատանքների իրականացման ընթացքում ապահովել օգտագործվող ավտոկայանատեղիի հատվածի անվտանգությունն ու մեքենաների բնականոն տեղաշարժը:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Զվարթնոց» օդանավակայանի ավտոհանգրվանի վերնահարկի վերակառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է պետական փորձաքննական դրական եզրակացություն՝ վերը նշված պարտադիր կատարման պահանջների պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝ Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝ Շուշանիկ Կարապետյան